

1. Ու՛մ դիմել ընտանեկան նպաստ կամ հրատապ դրամական օգնություն ստանալու համար

Անհրաժեշտ է դիմել համապատասխան սոցիալական ծառայության տարածքային գործակալություն

2. Ովքեր կարող են ստանալ ԽՍՀՄ խնայբանկի ավանդների փոխհատուցում

ԽՍՀՄ խնայբանկի ավանդի փոխհատուցում կարող են ստանալ մինչև 1931 թվականի դեկտեմբերի 31-ը ծնված անձինք, ովքեր հաշվառված են համապատասխան սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններում և ունեն Օ-ից բարձր կարիքավորության միավոր: Ինչպես նաև ՀՀ սահմանները պաշտպանած անձինք, ովքեր ունեն համապատասխան փաստաթուղթ: